

## ՆՇՆՐԻ ՄԱՔՈՅԱՆ

## Փիլիսոփայական գիտ. թեկնածու

## ՆԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈԳԵՒՈՐ ԼԻՆԵԼՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Թեակեր քրիստոնեական քարոզարշավը Նայասարանում սկսվել էր դեռևս Ա դարում, բայց այն մեծ դժվարությամբ էր հասարակվում հայ հոգևոր կյանքում, քանի որ դարերով արմատացած էր հասարակական հոգևորության գիտակցության վերածված հեթանոսական կրոնն իր սպասավորների և աշխարհիկ իշխանավորների կողմից ամենուր շարունակաբար սրանում էր բազմակողմանի նյութական և բարոյական օժանդակություն: Նայասարանում սրելով արդյոք իրավիճակը հստակորեն ներկայացնում էր հին, իր դարն ապրածի՝ հեթանոսության, և նորի՝ քրիստոնեության, բախում, առակաբար, անգիջում գոյեմարտ, որպեսզի վերջո նորն էր, որովհետև այն ի հայտ էր եկել նոր ժամանակի և հասարակական նոր իրավիճակի հոգևոր և բարոյական պահանջների թելադրանքով, այն էությամբ առավել արդիական էր ու կենսունակ, քանի որ կյանքի էր կոչվել որպես նոր մարդկային փոխհարաբերություններում ձևավորվող էությամբ միանգամայն նոր հոգևոր արժեքներ ունեցող համակարգ: Բավական լուրջ և փրկական միջկրոնական բախումներից հետո միայն, հայոց առաջին քրիստոնյա թագավոր Տրդատ Գ. Մեծի և հայոց առաջին Կաթողիկոս Գրիգոր Լուսավորչի անմիջական նախաձեռնությամբ, 301 թ. քրիստոնեությունը Նայասարանում հռչակվեց պետական կրոն: Անհրաժեշտ է նշել նաև այն կարևոր պարամական փաստը, որ Նայասարանը Դ դարասկզբին ոչ միայն Մերձավոր և Միջին Արևելքի, այլև ողջ աշխարհում առաջին պետությունն էր, որ համարձակորեն դիմեց նմանօրինակ քայլի: Նոր (քրիստոնեական) կրոնի ընդունումը բարոյապես խթանեց, որպեսզի աննախադեպ թափով սկսեին երկրի քարածքով մեկ կառուցվել քրիստոնեական եկեղեցիներ (տաճարներ), ինչպես օր.՝ Երեբունյքի, Օձունի, Պարդնիի, Արունի, Թալինի, Տոփսիմնի, Արծվաբերդի, Չորաղբյուրի, Մասպարայի և շատ ուրիշներ: Նոր հոգևոր դասի պարտադրաման նպարակով բանիմաց երիտասարդներ էին ուղարկվում Կեսարիա, Եդեսիա, Տամիդ, Ալեքսանդրիա, որպեսզի այնպես սովորեին և վերադառնային Մայր հայրենիք: Նայասարանում եկեղեցական արարողությունները դեռ շարունակում էին վարել ժամանակի առաջավոր՝ հունարեն կամ ասորերեն լեզուներով, քանի որ գոյություն ունեցող եկեղեցական գրականությունն ամբողջությամբ այդ լեզուներով էր գրված: Դա պայմանավորված էր հայոց գրի բացակայությամբ, իսկ ժողովուրդն ընդհանրապես չէր հասկանում թե՛ հունարենը, թե՛ ասորերենը: Սրելով ևս նման փառիմաստ հոգևորական իրավիճակում Նայ Եկեղեցու հոգևոր հայրերը ստիպված էին ժամերգության ընթացքում օգտա լեզվով ընթերցվող աղոթքները բանավոր թարգմանել հայերեն, ահա թե ինչպես առաջացավ թարգմանիչ – պաշտոնյաների դասը. «...որ եկեղեցական պաշտամունքներու կը մասնակցէր, և պաշտօն ունէր բերանացի թարգմանել և բացատրել Աստուածաշունչի այն կտորները, զորս վերծանող

պաշարօնականներ օտար լեզուով կը կարդային: Թարգմանիչներու պաշարօնն էր նաև մայրենի լեզուով ժողովուրդին բացատրել ծիսական աղօթքները, և անոնց սովորեցնել բերանացի և գոց արտասանել սաղմոսներէ կամ ծիսարաններէ առնուած գլխաւոր աղօթքները»<sup>1</sup>:

Շուրջ մեկ դար, մինչև Մեսրոպ Մաշտոցի կողմից հայ գրերի սրելծումը 404/5 թվականին, մեծ ու քրեաջան աշխարհաբան ավարար, հայ եկեղեցականները ստիպւած էին օտար լեզուով վարել եկեղեցական պաշարամունքային արարողությունները: Բանավոր թարգմանվում էին այն աղօթքներն ու սաղմոսները, որոնք ժամանակի ընթացքում ասորի-ճանաբար իրենց հոգեւոր փարածումն ու բարոյական ընդունելությունն էին գտնում ժողովրդական զանգվածների շրջանում, նրանց կողմից անգիր արվում և երգվում էին ամենուր՝ դաշտերում, փողոցներում, քանդակ, հարսանիքների ժամանակ, աղօթքների և սաղմոսների այն ընթացքին, որը հնուց համաժողովրդական հնչեղություն էր ստացել թե՛ Նայասարանում, թե՛ Նունասարանում, թե՛ Ասորեսարանում: Նման երեսույթը միանգամայն փրամարանական էր և պարմականորեն արդարացված, քանի որ հոգեւոր մշակույթի բազմաթիվ նվաճումներ բողբոջել են հենց կրոնի ընդերքում, այնուհետև դուրս են եկել այնպեղից կամ անմիջականորեն միջնորդավորվել նրանով: Նարկայես կրոնա-եկեղեցական ուսմունքի մեջ առաջին հերթին ընդհանրացվեց, վերաբերվորվեց, նոր հնչեղություն ստացավ բարոյական խնդիրներին վերաբերող մարդկանց դարավոր իմաստությունն ու կենսափորձը, և այդ հիմքի վրա ձևավորվեցին բարոյականության գլխավոր պահանջներն ու կանխադրությունները: Կրոնները, այդ թվում նաև քրիստոնեությունը, ներառում են իմաստասիրական, հոգեբանական ու բարոյական արժեքներ: Նամաշխարհային կրոնները (բողոքականություն, քրիստոնեություն, իսլամ), ինչպես նաև ազգային կրոնները (հուդայականություն, հինդուիզմ, դաոսիզմ, կոնֆուցիականություն, սինտոիզմ և այլն) ուժեղ են իրենց հոգեւոր արժեքներով, սեփական արարողական (սրելծագործական) ներուժով: Անառարկելի է այն հայրենի ճշմարտությունը (հուն. աբսիուտ), որ թե՛ հին աշխարհի, թե՛ միջնադարի, թե՛ նոր ժամանակի պարմական իրադարձությունները պարզապես հնարավոր չէ ներկայացնել առանց կրոնի մասնակցության և համապարասխան ազդեցության: Իրադարձություններ, որոնց դերն ու նշանակությունը անցել է հազարամյակների իմաստասիրական քուրայով, որովհետև նրանք իրենց հումանիստական էությանը նպաստակառողված են եղել հիմնականում միջանձնային՝ մարդ-մարդ, մարդ-հասարակություն ներդաշնակ փոխհարաբերությունների կառուցմանը:

Սերնդե-սերունդ, բանավոր փոխանցված եկեղեցական լուսավորչական ոգով իմաստավորված և ընդունված աղօթքները խորապես ապրում էին հենց (հայ) ժողովրդի հավաքական Եսաշխարհում, և երբ զգացվում էր դրանց անհրաժեշտությունը, ապա ասում էին երեք անգամ կրկնելով: Իսկ գրավոր հմայակների հորինմամբ, կամ ինչպես ասում են, «գիր կամ թուղթ անելու» գործով զբաղվում էին միայն քահանաները, փրագուններն ու խալֆաները, այսինքն՝ նրանք, ովքեր «ի պաշտոնե» փոխարինել էին հին քուրմերին: Ի փարբերություն լայնարձակ գրավոր հմայիլների՝ ժողովրդական բանավոր աղօթքները թողնելի ու անկաշկանդ ոճով բանահյուսված ուրանավորներ էին, որոնց գերակշռող մասը

1 Մաղարիա արք. Օրմանեան, Նայ եկեղեցին և իր պարմությունը ... , Կ. Պոլիս, 1911, էջ 40-41:

2 Տե՛ս Ն. Աճառյան, Նայոց գրերը, Եր., 1984, էջ 132 - 133:

ըստ էության ուներ պրամախոսական (դիալոգիկ) բնույթ: Ներկուարար, դա հիմք է պալիս եզրակացնելու, որ նման եղանակով, այսինքն՝ բանավոր ավանդույթի հիմքի վրա ժողովրդական, հոգևոր արժեքները ժառանգվել են սերնդե-սերունդ անցնելով իրենց անհրաժեշտ ձևավորումն են ստացել աղոթքների «ռամկական» կամ ժողովրդական այն փառքերակները, որոնք հոգևոր լինելով՝ ներառում էին նաև ժողովրդական երաժշտության փառքեր, և հեղափոխություններն էին բուն հոգևոր աղոթքներից, երբ հոգևոր իրականությունն ստիպված էր լինում դիմել վարչական միջոցների՝ արգելելով դրանց կատարումը<sup>3</sup>: Ի դեպ, կյանքը ցույց տվեց, որ այդօրինակ արգելքները երբեմն չէին խանգարում հայ շինականին դրանք երգել թե՛ եկեղեցու պատերի ներսում, թե՛ ամենուր: Եստիքոս Կեսարացու վկայությամբ՝ արդեն Դ դարում, եւ՛ գյուղերում, եւ՛ քաղաքներում, եւ՛ դաշտային աշխատանքների ժամանակ, ժողովուրդը սաղմոսներ էր երգում, և սաղմոսերգությունը խորապես արմատավորվել էր հայ ժողովրդի կենցաղում: Նախանշական է, որ եկեղեցական բոլոր փեսակի արարողությունների կատարման բնույթը հիմնովին վերանայվեց հայոց գրերի ստեղծումից հետո, որովհետև Մեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևը իրենց ավագ աշակերտների հետ միասին ձեռնարկեցին Աստվածաշնչի և պաշտամունքային բնույթի մի շարք բնագրերի հայերեն թարգմանության վսեմափառ գործը: «Աստվածաշունչ»-ը հայերեն է թարգմանվել Ե դարում հայոց գրերի գյուրից անմիջապես հետո: Օրարալեզու հնագույն թարգմանությունների շարքում հայերեն այդ թարգմանությունը արժանացել է բարձր գնահատականի՝ համարվելով «թագուհի թարգմանության»<sup>4</sup>: «Աստված շնչով գրուած ամէն գիրք օգտակար է ուսուցման, յանդիմանութեան, ուղղելու և արդարութեան մէջ հաստատելու համար, որպէսզի կատարեալ լինի Աստծո մարդը և պատրաստ՝ բոլոր բարի գործերի համար» (Բ. Տիմոթ. Գ. 16-17): Մեսրոպ Մաշտոցի ու Սահակ Պարթևի հոգածության կենտրոնում էր նաև Պարարագամարույցի շուրափույթ թարգմանության վսեմ ու առաքինի գործը, հետևաբար, նրանց ջանքերն ուղղված էին գոյություն ունեցող քրիստոնեական ձեսերին ու արարողություններին հայկական շունչ, երանգ, իմաստ և հնչեղություն հաղորդելու՝ դրանք բարեկարգելու և կանոնավորելու գործին: Չմոռանալու ասել, որ Իսրայելա-Նուդայական պետության հիմնադիր Սալմուդի որդի Դավիթը -Ք. ա. 950 թ. արդեն Աստվածաշնչից առանձնացրել և նորովի էր թարգմանել սաղմոսները: Իսկ ժամանակին յուրօրինակ և յուրառոճ մարգարեական օրհնություններով և նորաստեղծ քարոզներով աչքի ընկնող հայկական Սաղմոսարանի ստեղծումը, ըստ էության խթանեց 1568 թ. Կ. Պոլսում Աբգար Դպիրի կողմից «Նայոց Ժամագրքի» լույս ընծայման գործընթացը, իսկ Արենի կամ Մայր ժամագիրքը 1642 թ. Նոր Զուղայում հրատարակվեց կրթական-լուսավորական գործիչ Խաչատուր Կեսարացու ձեռամբ:

Բյուզանդիայի Արարիկոս հովվապետը Սահակ Պարթևին գրած իր նամակում հայտնում է, թե «մեր ինքնակոչ Ավգոստոսի հրամանով քեզ իրավունք է տրվում ուսուցանել մեր կողմում (Նայասարան), իսկ բոլորքիստոնների աղանդը կա՛մ հավանության բեր, կա՛մ հավածիր քո վիճակից»: Այս երախտիք է հայտնում և ոգևորիչ խոսքերով փռել կացնում.

3 Տե՛ս «Կանոնագիրք հայոց», Կ. Ա., Եր., 1964, էջ 240:

4 Աստվածաշունչ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1994:

«Քո ուղարկած Մեսրոպին ձեռնադրեցինք եկեղեցիապիկոս»<sup>5</sup>, այսինքն՝ Ուղղափառ Եկեղեցու անդամ: Նայ ժողովրդի և նրա Եկեղեցու հոգևոր դավանաբանական ակնհայտ վերելքի ընթացքում Ե դարի 50 - ականի սկզբներին քրիստոնեական աշխարհում գնալով թեժանում էին դավանաբանական վեճերը Քրիստոսի մարդկային ու աստվածային բնության շուրջ, վեճեր, որոնք սկսվել էին դեռ Ե դարի երկրորդ քառորդից, հարկապես Ալեքսանդրիայի ու Անտիոքի աստվածաբանական դպրոցների միջև:

Արևելքի մի շարք քրիստոնեական եկեղեցիներ, այդ թվում նաև Նայ Եկեղեցին հետևում էին նախկին եկեղեցական ժողովների կողմից մշակված դավանաբանական ուղղությանը, մերժում էին Քաղկեդոնի ժողովի սահմանած դոգմաները, ինչը Նոմնա-բյուզանդական և Արևելյան՝ եգիպտական, ասորական եկեղեցիների հարաբերությունների խզման պարճառ դարձավ: Այդօրինակ պառակտումը ավելի խոր բնույթ ստացավ և վերածվեց հակասության, ապա նաև դավանաբանական սուր հակամարտության Ե դարի վերջերին և Զ դարի սկզբին, հանգեցնելով դավանաբանական խնդիրների ու վեճերի գույր քրեական-կրոնական իմաստի ու բովանդակության կորստի և ավելի մեծ պարբիաբարությունների իրավասությունների ու գերիշխանական շահախնդրությունների վերածմանը: Սկսված միջեկեղեցական՝ դավանաբանական անգիջում և թեժ վիճաբանությունը հանգեցրեց քրիստոնեական Եկեղեցու ընդհանուր հավաքի կոնֆեսիոնալ<sup>6</sup> պառակտման, ինչի նկատմամբ չէր կարող անարարքեր մնալ նաև Նայ Եկեղեցին: Դրա վառ ապացույցը Ե դարի վերջում Նայոց Կաթողիկոս Նովիան Մանդակունու ելույթն էր ընդդեմ երկաբնակության<sup>7</sup>, որով և սկսվում է անգիջում պայքարը թե՛ երկաբնակության, թե՛ քաղկեդոնականության դեմ, և սկզբնավորվում է այդ պայքարի փրամաբանությունն արպացույթ գրականություն<sup>8</sup>: Նարկ է նշել, որ այդ գրականության առաջնեկը եգիպտական միաբնակության առաջնորդ և հիմնադիր, երկաբնակության ու Քաղկեդոնի ժողովի թունդ ընդդիմախոս Տիմոթեոս Կուզի<sup>9</sup> «Նականառության» (480–484 թթ.) հայերեն թարգմանությունն էր, որը հայ եկեղեցականների համար լուրջ փաստաթուղթ՝ գեներ էր ծառայում ընդդեմ նեստորականության և քաղկեդոնականության:

5 Մաղաքիա Օրմանեան, նշվ. աշխ., էջ 44-45:

6 Լատ. Confessio – (ճանաչում, ընդունում, խոստովանում) դավանություն, հավատք, կրոն:

7 Տե՛ս «Շողակաթ», Գ. Տ.- Մկրտչյանի հոդվածը, էջ 158. «Նայ մարենագրության հնագույն թվականները» և Կարապետ Եպիսկոպոսի հոդվ.՝ նույն տեղում էջ 89-94. «Նովիան Մանդակունի և Նովիան Մայրավանեցի»:

8 Տե՛ս Մ. Արեղյան, Նայոց հին գրականության պարմություն, հ Ա, Եր., 1968, էջ 393-397:

9 Տիմոթեոս Էլուրոս կամ Կուզ, դասվել է ամենանշանավոր միաբնակ եկեղեցական հայրերի շարքը թե՛ իր գործունեությամբ և թե՛ իր երկերով. արժույթով է Գանգրա, ապա՝ Խեթրոն, վախճանվել է 477թ.: Տե՛ս «Տիմոթեոս Եպիսկոպոսի Ալեքսանդրեայ Նականառություն առ սահմանադրված ժողովոյն Քաղկեդոնի», ի լոյս ընծայեալ աշխատությամբ Կարապետ Ծ. վարդապետի և Երուսնդ վարդապետի, Էջմիածին, 1908: